

ՄԱՍԻՍ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՅԱՆ ԲՈՒԼՎԱՐԻ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 32

30 ՅՈՒՆԻՍ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայ եկեղեցականությունը

Մոլորումը

«Կոզմոս»

Պատասխան Մասիսի Հարցումին

Երկ գիտնայի՜...

Ռուս Հեղինակի մը

Ծերունիները

Ա.Գարե Լիխաթեցիկերի

Մեր Գայրոցնեուն մէջ

Ա.Շապուր Եւ Մր. Ալեհ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՏՕՄԻՆՕ

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

ՄԱՆՆԻԿ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՄԱՍԲՐԷ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԽՄԲ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԵԱՆ

1907

UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

THE STATE

OF NEW YORK

THE STATE

OF NEW YORK

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

THE STATE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական և ֆաղսական. — Բաժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 8) շրջ. : գաւառներու համար 108 շրջ. և օտար երկիրներու համար 35 ֆր. : Ձեռքէ վաճառում՝ տասը ֆարա: Հասցէ՝ Ղալաթիա, Քամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակադմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւելի աւելի՝ հրատարակ զառնալով՝ նորանոր բարեփոխումներու շնորհիւ, զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵԼՍԱԿԻՐ ԸՂԼԱԼԸ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնաղխական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական ևայլն, բայցի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նիւթերու ճօն պէսպիսութիւն մը կը կազմեն:


Եզրիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Ֆրանսերէն Բառարանը, որ գեղեցիկ աշխատութիւն մը և ամէն անհատի անհրաժեշտ Բառագիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրավաճառ Զարեհ Էֆ. Թորոսեանի քով, (Պոլիս, Պահլէ Գաբու, Բասըմ Բաշա Խան) որուն կրնան գիմել Բառարանին՝ (գինը 15 շրջ. փօթի ծախքով 16¹/₂) ինչպէս դրենական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խղճամիտ գրավաճառի մը հետ գործ ունենալու վստահութեամբ. — Իր հրատարակութիւնն է նաև Դպրոցի Դիրքը դասագիրքերու շարքը, որ միակն է կանոնաւոր մէթոսով մը ընթացող՝ նախակրթական դասընթացքի շրջանին համաձայն:

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ՝ դրած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան մասնաւորապէս ծնողքներու և դաստիարակներու համար, որոնք կը փափաքին գիտնալ թէ ինչպէս կարելի է օգտակարապէս խօսիլ մանչերու, իրենց տարիքին յատուկ եղող մոլութեան վրայ և անկէ զգուշացնել զանոնք: Կատարեալ դեղագիր մըն է այս գրքոյկը՝ գիշութեան դէմ: Գինը 5 շրջ.:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ՝ կը խօսի մանչերու յատուկ մոլութեան վրայ բոլոր իսկ մանչերուն, որպէս զի անոր բնութիւնը և վտանգաւորութիւնը հասկնան նոյն իսկ իրենք ու կամովին հրաժարին անկէ: Անգլիացի ընթերցողներէ ա՛յնքան համակրութիւն վայելող այս գրքոյկը հայերէնի թարգմանած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան հայ պատանիներու ծառայութիւն մը մատուցանելու համար: Բացարձակապէս վստահելի ու անօրինակ կերպով աժան — լոկ 40 փարա — որպէս զի մատչելի ըլլայ ամէն մանչու: Կեդրոնատեղին՝ Պալենց Դրատուն, Կ. Պոլիս:

Պէրսիկէսն վարժարանի հանդէսը. — Կիրակի տեղի ունեցաւ Պէր-
սիկէսն Վարժարանի աւարտական ճառերու ընթերցման հանդէսը :
Ընթացաւ արաներէն Պ. Գէորգ փիլիսոփայութեան կարգաց իր աւարտական
ճառը. «Իմաստասիրութեան ընկերային դերը» (աշխարհաբար) : Հետդհետէ
իրենց թեզերը կարդացին Պրն. Պրն. Պերճ Սաաթեան, Le réalisme et
l'idéalisme dans l'art. Ե. Հապէտեան «Գրականութիւն երկոստասներորդ
դարու» (հայերէն գրաբար), Գ. Շահինեան «Կէօթէ և իր Գործը» (գեր-
մաներէն). Վ. Դերձակեան «Milton». (անգլերէն) Ե. Անդրէասեան «Իրա-
ւադիտութեան դերը» (օսմաներէն). Զ. Սուրէնեան «Գաղղ. գրականութեան
ազգեցութիւնը Հայ գրականութեան վրայ» (այլս.) : Արտասանութիւններ
ըրին Պրն. Պրն. Տիրան Կլարճեան՝ S. Prud'homme, Les écuries d'Augias, Ե.
Յ. Քէչիլեան թուրքերէն լեզուով «Յաղիլէթ», Վ. Սարգսեան «Սէրը
սրտին» ևն. : Յետոյ ներկաները առաջնորդուեցան նկարներու սրահը,
ուր դեղեցիկ նկարներ ունէին Պրն. Լեւոն Ռուբինեան և ուրիշներ : Տեղի
ունեցան մարմնամարզի փորձերը և յաջող հանգիստացան Պրն. Պրն. Գ.
փիլիսոփայութեան, Տ. Կիւրճեան, Յ. Քէչիլեան և այլն : Ժամանակի սղու-
թեան պատճառով իրենց թեզերը չկրցան կարդալ ընթացաւ արաներէն՝
Պրն. Պրն. Վահրամ Զուհաճեան «Հին և նոր փիլիսոփայութիւն», Լեւոն
Ռուբինեան «Բնազգական գործունէութիւնը», Գաբրիէլ Պասմաճեան
«Գեղարուեստական վերածնունդը», (երեքն ալ հայերէն աշխարհաբար),
Օննիկ Կէմճեան «Կեանքը և իր աստիճանները» և Վահրամ Աւգեր
«Տնտեսական դիտութեանց դերը» (երկուքն ալ ֆրանսերէն) : X Պրու-
սայէն կը դրն. «Տեղիս ամերիկ. վարժարանին մէջ հանդէս մը սար-
քուեցաւ : Արտասանութիւններ ըրին Օր. Արաքսի Կարապետեան և Օր.
Ագապի Նալչանսեան : Օր. Մաթիլտ Պաղտասարեան երգեց երկու
մեներգներ : Հինգ ընթացաւ արտունչներ ներկայացուցին «Not a man in
the house» տրամախօսութիւնը : Յուլիս Յին տեղի ունեցաւ վկայական-
ներու բախումի հանդէսը : Հինգ ընթացաւ արտունչները կարդացին իրենց
աւարտական ճառերը. Օր. Միածան Մորճիկեան՝ «Անժուժկալութեան
դոհերը», Օր. Յասմիկ Առաքելեան «Պրուսա քաղաքին հնութիւնները»,
Օր. Աղանի Մորճիկեան «Տարիներու մակընթացութիւն», Օր. Բերու-
ղիկ Օտարեան «Ինչո՞ւ համար կ'ապրինք» և Օր. Աղանի Քիւնտել-
եան «Համերաշխութիւն» : X Այնթապի Աղեհական Որբանոց-Կրթարանին
մէջ տեղի ունեցեր է ամովերջի հանդէսը : Ուսանողները հայերէն, թուր-
քերէն ու անգլերէն արտասանութիւններ կատարեր են, և իրենց աւար-
տական ճառերը կարդացեր են : Այս տարի կուտայ հինգ չըջանաւարտ :
Կրթարանին ծրագիրը կը համապատասխանէ տեղին Կ. Թ. Քօլէճի
«սփօմօ» կարգին ուսումնական ծրագիրին : Դժբախտաբար այս վաղեմի
հաստատութիւնը 230 ուսկիի պարտք մը ունի : Բաղձալի է որ Այնթապի
ուսուցիչները ստանձնեն ինքնաբեր նուիրաւորութիւններով
ազատել այդ վարժարանը իր պարտքէն : X Գաւառ-Քէօյի Միթիթարեան
Վարժարանը կիրակի օր կատարեց իր ամովերջի հանդէսը, ներկայու-



ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՒԼՔ ԱՐԾԷՆ

5507 ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 32

30 ՅՈՒՆԻՍ 1907

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

[ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՁ]

Բ. Մ. Ա. Ս

Ի.

«Դուք, ո՞վ մարդիկ՝ չեք կրնար բանի մը մասին խօսիլ, առանց անմիջապէս որոշում տալու. առ' անխելք ե, ան' ինքացի, առ' քարի ե ու ան' չար: Եւ ինչո՞ւ: — Արդեօք յոյսը մանրամասնութիւններուն մէջ փնտռած էք գործի մը ճշմարիտ շարժանիքը: Արդեօք կրցած էք ճշգրտօրէն բաժանել ա՛յն պատճառներուն, որոնք ծնունդին եւ անխուսափելի ըրին աշդ կրօն. գործը: Երե՛ զայն գիտնայիք, աշդքան շատ պող պիտի չըջնայիք դատելու համար»: ԿԷՕԹԷ

28 Յունիս 1895. — ԴԵ.

Վանատունի միակողմնականը և մեր շուրջը քնացող ամայութիւնը մեր աչքին առջեւ կը բերեն յանկարծ, դուրսի աշխարհը, ժողովուրդը, որուն հետ պիտի խօսինք և որուն կրօնական կեանքին համար պիտի գործենք քանի մը օրեր վերջը: Արդեօք այսօր մը գործած պիտի ըլլայինք, երբ ըսէինք, թէ աշխարհը եւ մենք՝ կրօնաւորներս՝ թերեւս հակառակեանք պիտի կազմենք չարունակ: Հիմա մե՛նք ենք որ կը խօսանք,

մեր նորընծայութեան ձայնին ուշադիր, երբ ժողովուրդը դուրսը կ'երգէ ու կը գողայ. և վաղը մենք պիտի խօսինք և ժողովուրդը պիտի խօսկայ, քարոզուած հաւատքին վերածնութեանը հանդէպ: Դեռ քանի մը օրեր առաջ, համախոհներ էինք ժողովուրդին հետ, կրօն-նախապաշարում-ներու ձուլածոյի մը շուրջը հաւաքուած. անոր հետ միեւնոյն լեզուն կը խօսէինք և միեւնոյն գնահատումը ունէինք կրօնական իրերու մասին, մեր ազօթասէր (?) զգացումներուն կոյր թափովը: Գիտենք, սակայն, թէ մեծ ալիքները շուտով կը ծփան ու կը շարժին: Եւ ժողովուրդը այդ մեծ ալիքն է որ անկողին կը փոխէ շարունակ, կարծես դժգոհ ինքն իրմէն: Եւ այդ ծփուն յարաշարժութիւնը, այդ գաղափարներու և համոզումներու պարապինդ ու միեւնոյն ժամանակ ծփանուտ անհաւասարութիւնները, ժողովուրդը շինած են այն բաղմաբլուի և բաղմա-կնճիւ Հիդրան, որ պիտի պաշտէ կրօնի մէջ ումանց այրածը և պիտի այրէ շատերուն կողմէն պաշտուածը: Երբեք հաւասարակշռութիւն գաղափարի, համոզումներու և սկզբունքի. երբեք միօրինակ ներդաշնակութիւն կրօնի մէջ՝ տոնչափի և երազանքներու, երբեք միասնական գնահատում հաւատքի ներշնչումներուն:

Ինքն է, որ մեզ կը պատրաստէ և ինքը պիտի ըլլայ թերեւս մեծագոյն դժգոհը իր այս ձեռնարկին համար: Ամէն մարդ իր ըմբռնումովը և արագ պիտի դատէ մեզ, ամէն մարդ ի՛ր չափը պիտի գործածէ մեր կրօնական համոզումներուն համար, ամէն մարդ ի՛ր պրիսմակէն պիտի դիտէ մեզ, մէկը կիրքով, միւսը՝ ատելութիւնով, մէկը՝ նախապաշարումով ու միւսը՝ նախանձով: Եւ, աւագ, թերեւս չգտնուի մէկը, որ կարող ըլլայ դատել՝ անձնականութենէ բոլորովին անկախ՝ եկեղեց. ընդհանուր պէտքին և պահանջին տեսակէտներէն մեկնելով: Հոս պիտի սկսի գաղափարի խղումը, հոս պիտի սկսի հետձուածը: Եւ ամսօսանքը շատերուն վերջին վճիռը պիտի ըլլայ, Դպրեմանքի հասցէին: Օ՛հ, երանի թէ ըմբռնէին անոնք բուն իսկ մեր ներքին համոզումները, Հայ Եկեղեցիի պատկառելի հնութիւնովը օծուած, և ա՛յն ատեն, վստահ եմ, թէ կրթութեան այդ յարկը պիտի դիտուի՝ իբր օրօրոցը կրօնական վերազարթնումին, իբր Մսուրը, ուր անգամ մըն ալ կը ծնի բուն Հայ-Քրիստոնէութիւնը:

Ինչ որ ալ ըլլայ Եկեղեցիին ապագան, ինչ որ ալ ըլլայ ժողովուրդին հաւատքը, սա դիտենք միայն, թէ մենք պիտի ըլլանք մեր կրօնքին ապագայ գործաւորները, Հայ Եկեղեցիին մէջ: Ուրեմն, պէտք է հիմա-կուց ըմբռնենք, սա ահաւոր ճամարտութիւնը. «Ի՞նչ է ա՛յն առաքեալը, կարգադիրը, տիեզերական ըլլալու սահմանուած անձնաւորութեան մը Յայտնողը կամ Ընծայացուն, Եկեղեցիի բարեկարգիչը, որ տառապած կ'ըլլայ, ո՛չ թէ իր հակառակօրդներէն, այլ բուն իսկ իր բարեկամներէն, իր հաւատքի եղբայրներէն ու քոյրերէն»: Ճամարտութիւնը առանց

խզումի չկրնար քարոզուիլ : Ժողովուրդին հետ Յիսուսի ունեցած խզումը, անոր անկաշկանդ լեզուն, անոր ոտք վերաբերումները դէպի Ժողովուրդին հոգեկան կեանքը, և այս վերջինին բուն ընդդիմութիւնները, գաղափարաւոր ձայները, չկրցին երբեք Յիսուսէն պակսեցնել՝ Ժողովուրդին համար զգացած իր սէրը : Եւ դիմադրութեան ամէն մէկ բառ, ընդվզումի ամէն մէկ շարժում, կարեկցութեան և գութի նոր երակներ բացին Յիսուսի հոգիին խորը : Ան կը ճանչնար Ժողովուրդը և անոր սիրտը, կը ճանչնար անոր բարդ մեքենականութիւնը, և ամէնէն աւելի կը զգար, թէ ճշմարտութիւնը չէր կրնար առանց խոչընդոտի քալել դարաւոր նախապաշարումներու մէջէն : Ինքը չա՛ւ լաւ գիտէր, թէ «ամէն քարոզիչ որ մեծ է, կա՛մ հանճարով կա՛մ սրբութիւնով, պիտի սկսի զարմանք, սոսկում և գայթակղութիւն պատճառելով ամէն անոնց, որոնք միջակութեան և կամ սովորամոլութեան մէջ կ'ապրին» :

Ամէն դարու և ամէն տեղի Ժողովուրդ — ինչ որ ալ եղած ըլլայ իր զարգացումին և յառաջդիմութեան համեմատական չափը — մեծ մասամբ կազմուած է միջակներէ, որոնք չեն կրնար իրենց վրայէն թօթուել խորհուրդին բոլորը, և սոյնոքաններէ, որոնց համար կեանքը կեանք ըլլալէ, և հաւատքը հաւատք ըլլալէ պիտի դադրէր, եթէ իր երէկի եկեղեց, փուլերովը չներկայանար անոնց աչքին : «Ով որ չխորհիր և սովորութիւնով կը վարուի, միտումով լաւատես մըն է. Թագաւոր Ժողովուրդը՝ իր ամբողջութեան մէջ, գրեթէ կը գոհանայ իր իմացական ու հոգեւոր կեանքի ներկայէն, սովորամոլ է անիկա : Իրեն համար, իմացական ու հոգեւոր կեանքի փոփոխութիւնն է մեծագոյն չարիքը» : «Որչափ ստորին ըլլայ Ժողովուրդ մը, այնչափ աւելի կուրօքէն պահպանողական մըն է անիկա կրօնի և իմացական կեանքի գործերու մէջ» կ'ըսէ Կիւլեօ : Ու միւս կողմէն, հակառակ իր սովորամոլութիւններուն, Ժողովուրդը բազմագոյն և տարադասանջ եղած է ամէն ժամանակի մէջ : Ան չպահանջեր ինչ որ անհրաժեշտ ու կարեւորն է իր կրօնին ու իմացական կեանքին, ինչ որ պիտի յարմարէր իրեն, այլ կը պահանջէ ինչ որ կը մոռնէ ու կը բաղձայ : Երեւակայեցէք մոռնում մը, որ հասարակաց կուտան մը չունի, և կրօնի բաղձանքներ, որոնք բիւրաւոր ծրարեով կազմուած, փրփրայոյզ օղակներէ շինուած են, և այն ատեն չուտով պիտի ըմբռնէք, թէ ո՛րքան ապերախ ճիգ մըն է Ժողովուրդական հոսանքը, և ո՛րքան ապուշ մոռնում մը՝ «Ձայն բազմաց»ը : Աստուած անհասանելու բերնով միայն կը խօսի, առանց ինքզինքը խաղալիքը ընելու Ժողովուրդական Ժխտին, որ յարածուի, երբեք չէ կրցած որոշ ուղղութեան մը, տրամաբանուած եղբակացութեան մը յանգիլ : Հո՛ն, ուր լուրջ գիտակցութիւնը խանգարուած է միջակութիւններով ու սովորամոլութիւններով, հոն կարելի չէ հոնգիպիլ գիծի մը, որ ճշմարտութիւնը կամ ճշմարտութեան շօշափողը կազմէ գոնէ : Ահա՛

այս պատճառով ժողովուրդը ցնորք միայն կը տեսնէր յայնդուգն կրօնի քարոզիչներու բերնին մէջ. բայց, «չկայ իրականացած մեծութիւն կրօնի մէջ, որ նախապէս ցնորք մը նկատուած չըլլայ: Այսօրուան կրօնի ճշմարտութիւնը երէկի ցնորքն է. պատմութիւնը իրականացած ցնորքներու շարունակութիւն մըն է միայն»:

Քանի որ աս է ժողովրդական հոսանքին ուղղութիւնը, ապահովաբար ի յայտ պիտի գայ կրօնի հալածանքը, մէկ կամ միւս կողմէն: «Կրօնի մէջ հալածող մը ըլլալէ աւելի հալածուած մը եղիւր» կ'ըսէ եւրոպական առածը: Որովհետեւ անոնք, որոնք կը հալածուին, կրօնական և եկեղեցական համոզումներու մէջ, ուշ կամ կանուխ պիտի կրնան վայելել իրենց ընծայութեան պտուղները: Ընդդիմութիւնը՝ կրօնի ճշմարիտ դաւանանքներու հանդէպ, միակ արեւն է, որ պիտի հասունցնէ քարոզուած սերմերը: Պատմութեան դաւանանքն է ասիկա, և պէտք է մեր ալ դաւանանքը ըլլայ: Միակ պայմանը, որ անհրաժեշտ է կրօնի արդիւնաւորութեան համար, սա է՝ թէ՛ պէսքէս ախրեղ ժողովուրդը: Քեզ ապտակող ձեռքին տրուած համբոյրը, յաղթութեան միակ գրաւականն է կրօնքի բարոյական կալուածին մէջ: Փռչէ պսակները, զոր Բարաբաներու շղթաները քակող ձեռքերը կը հիւսնն Յիսուսի և անմեղներու ճակատին, պէտք է բեղմնաւորել չիթ առ չիթ, և այդ փուշերէն վարդեր բուսցնել ժողովուրդին կրօնին ու հաւատքին համար: Ժողովուրդը կղերին եղբայրն է, պէտք չէ արհամարհել անոր սխալները: Արհամարհել կը նշանակէ թունաւորել ժողովուրդին հոգին: Ռեւան կը ցաւի, որ Լամբէ աւելի բարկացաւ, քան արհամարհեց: Մենք՝ կրօնաւորներս պէտք է Լայքնիցին հետեւինք, բան մը շարհամարհելու իր սկզբունքին մէջ: Մեծ դժբախտութիւնը հոն կը սկսի, կը գրէ Ժիւպէս, երբ ժողովուրդի մը կէսը միւս կէսէն կ'արհամարհուի: «Կրնա՞ք երեւակայել ընտելետ մը, որ արհամարհանք միայն ունենար ծովի խնչափառներուն համար և իր յարգանքը պահէր զրախտի թռչուններուն համար միայն: Մարդկային, ինչպէս նաև կենդանական կեանքի բոլոր ձեւերը տնտեսական են, միայն անոր համար, որ գոյութիւն ունին: Միայն պէտք է ջանալ անոնցմէ վնասակարները անվնաս ընել: Եւ անոր համար անբաւական պիտի ըլլար արհամարհանքը, որովհետեւ անկարողութեան ունայն մխիթարանքն է»:

Ո՛չ, մենք պիտի սիրենք ժողովուրդը, հակառակ իր բոլոր կրօն թերութիւններուն, նախապաշարումներուն, որովհետեւ իր զաւակն ենք մենք. և այդ սէրը բաւական պիտի ըլլայ մեզի, մեր պաշտօնը կատարելու համար Հայ Եկեղեցիին ու Հայ Ժողովուրդին մէջ, անոնց ի սպաս դնելով մեր կեանքը եւ կրօն. համոզումները:

ՄԱՌԵՅԳ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄՈԼՈՐՈՒՄԸ

Բ.

Պէտք է իրենց տունը երթալ այցելութեան: Բոյրերս կը պնդեն. եթէ մինչեւ հիմա չհասկցան զիս մաշեցնող ցաւը, ապահովաբար սկսած են տխմարանալ:

— Արուսեակ, լաւ ես կ'ըսէին, գոյներդ եկան, կ'երեւայ թէ թեթեւ հիւանդութիւն մըն էր որ անցաւ վրայէդ:

Գարունը կը յաւաճանայ սքանչելի կերպով: Ճերմակ ծառերը ժպիտը կ'արթնցնեն մէջս: Ինչպէս կը նայիմ վարդագոյն և կապոյտ ծաղիկներուն, որոնց թարմ երանգներուն ծարաւը ունէի երկար ատենէ ի վեր...: Ահ, բայց հազիւ թէ արտաքին աշխարհը զիս բոպէ մը կը զբաղեցնէ և ահա իմ մէջս կ'ամփոփուիմ, միայն իրմով զբաղելու, իր վրայ մտածելու: Յաւը՝ այն զանգուածային և խզող ցաւը, կամաց կամաց կը սկսի թոյլնալ և տկարանալ մէջս, և ես ալ կը սկսիմ յուսալ լաւագոյն օրերու: Ինչ բանի վրայ հիմնուած է սակայն լաւագոյնին յոյսը: Երբ շատ խորունկը մնտում, կը տեսնեմ որ պարտէզին մէկ պղտիկ ծաղիկին վարդագոյն կամ կապոյտ կամ դեղին երանգն է որ այդ զգայնութիւնը կ'արթնցնէ մէջս:

Նեղացուցիչ գաղափար մը սակայն՝ իրենց տունը երթալու գաղափարը. ապահով իր եղբայրը՝ Արամը հոն պիտի ըլլայ և անկեղծօրէն կ'ատեմ այդ տղան: Ինչպէս կարելի է ֆիզիքայէս և բարոյապէս այդքան տարբեր ըլլալ իրարմէ: Արամ թուի է բոլորովին և իր սեւ, կարծր աչքերը յաւակնոտ և ինքնահաւան բան մը ունին. դիտած եմ որ արդէն սեւ աչքերը՝ եթէ գերազանց գեղեցկութիւն մը չունենան, պարապ, անմիտ կամ գոռոզ բան մը կ'ունենան և ատիկա անտանելի է: Արամ նայած ատենը յազմանակած ըլլալու արտայայտութիւն մը ունի, չափազանց վստահ ինքզինքին վրայ, խիզախող և զիմադրող նայուածքովը: Ինչ տարբերութիւն Վահէին կապոյտ, պայծառ և անշարժ նայուածքէն, որ ամբողջ էութեանդ գորովանքի լոգանք մը տալու ապաւորութիւնը կ'ընէ... Վահէին աչքերը... յաճախ կը խորհիմ անոնց... Ի՞նչ կ'ըսեմ, կարծես թէ իր նայուածքը դեռ աչքերուս մէջն է, իր անթափանցելի և հանդարտ նայուածքը. որ կը սեւեռէր վրաս, կարծես աչքերով զիս խմելու համար. ու չրթունքները կը սեղմուէին և ամբողջ գէմքը կրօնական ինքնամիտփում մը կը ստանար և կը զգայի որ այդ նայուածքը պաշտում մըն էր:

* *

Ինչ զարմանալի տարբերութիւն երկու եղբայրներուն մէջ: Արամ, հակառակ իր նայուածքին խորիստ վստահութեան, ամէն վայրկեան տեղի տալու, գոհուելու ձեւ մը ունի. մինչ Վահէ իր ամէնէն գողտր և

սիրալիքի ժամերուն անօրինակ հպարտութիւն մը ունէր, չեմ գիտեր ինչ մը, որով միշտ սանձը իր ձեռքին մէջ կը մնար: Եթէ հրամայէր՝ կը հնազանդէիր: Արամ ընդհակառակը երբեմն ուրիշներէն հրամանի սպասելու երեւոյթ ունի: Կարծեմ թէ՛ բաւական շուարուովու և քծնելով կը վերաբերուէր ինծի հետ... Այդ բանին մէջ չեմ սխալիր երբեք: Վերջապէս, ժամանակս նուազ ձանձրանալի անցընելու միջոց մըն է... Հասկալի չէ՞, ինչ ապուշ, ինչ մեղրոտ, անուշորակ, սիրտ խառնող խօսքեր, որոնք շատ մը անհամ շաքարեղէն կերած ըլլալու անհանգստութիւնը կուտան և փոխելու փափաքը: Ամէն պարագայի մէջ, քիչ մը երախտապարտ եմ բոլոր անոնց՝ որոնք ինծի դարպաս ըրին: Վահէին մեկնելէն ի վեր կարծես թէ ամբողջ աշխարհ զիս լքած և մէկ կողմ ձգած էր, անպէտք բանի մը պէս: Գէշը ան է որ, ոչ մէկը, ոչ մէկը չկայ՝ որուն համար ըսեմ, Թեհրան... Ոչ մէկը... Կամ շատ տխմար են, կամ շատ անպատկառ: Վահէ պահանջելու ձեռ ունէր և իրականին մէջ բան մը չէր պահանջեր: Կինները կ'ուզէին որ պահանջուի իրենցմէ, մերժելու հաճոյքը և մերժողի դերադանցութիւնը պահելու համար: Եւ ասիկա բնաւ մտքէ չեն անցընէր այն մարդիկը՝ որոնք ամէն բանի մէջ տեղի տալու երեւոյթը ունին: Վահէ ճիշդ այդ դժուարին չափը կրցած էր գտնալ: Իրաւամբ դեռ ո'չ մէկը Վահէին բացարձակ ազդեցութիւնը կրցած է ունենալ իմ վրաս: Արամ ա'յնչափ տարբեր է ելքօրմէն: Անիկա տկար նկարագիր մըն է և դիմագրելու կարողութիւն չունի բնաւ և զարմանալի է որ հակառակ իրեն՝ իր աչքերը, իր սեւ և հակակրելի աչքերը իրենց մէջ ունին տեսակ մը ինքնափոտահութիւն, ճշդիւ իրենց անդիմադրելի ըլլալու հաւատքը: Վահէ իր ամբողջ անձին վրայ տիրող բան մը ունէր, նոյն իսկ խիստ, հատու և անողոք ծագրանքով մը դատապարտելու պատրաստ: Բայց իր աչքերը, իր անուշ և անպղտոր աչքերը, կապոյտ և լուսեղէն շողիւնի մը մէջ ողորուած, իր հանդարտ նայուածքով, երազուն աչքերը կ'ամոքէին, կը հրապուրէին և միեւնոյն ատեն դերադոյն հրճուանք մը կը ներշնչէին... Ուր են հիմա անոնք, Աստուածս, ո՛ր այն կրօնական և խաղաղ հանգարտութիւնը որով կ'ողողէր իր զմայլանքը վայելող աւարկաները. այն նայուածքը, որ իմ վրաս հանգչած է քանի՜ անգամ, այն սքանչելի և բարեբար նայուածքը՝ ո՛ր կը սեւեռի հիմա, որո՞ւն կուրծքը կը բաւախէ անոր հեշտագին վրդովմունքովը... Երբեք պիտի վերադառնայ ինծի անիկա, երբեք իմ յոգնած և ցաւաւորանջ մարմինս պիտի հանգչի՞ անոր ամբողջ խաղաղութեանը մէջ... Ահ... իրաւ որ երբեմն կը մտադրեմ ամէն բանի հանդուրժել, իր տխմար կնոջ և իր հպարտութեանը, ու կը ցանկամ որ քովս, մօտս ըլլայ և գլուխս հանգչեցնեմ իր կուրծքին, իր սիրելի և հպարտ կուրծքին վրայ...

Ինչ յիմար... Ահաւասիկ կը խորհիմ իր կնոջ նապաստակի երկչոտ

գլխուն, հոն, իմ երազած երջանկաւէտ անկիւնին մէջ. պա՛հ, երբե՛ք, երբեք չպիտի կրնամ անկեղծօրէն նախանձիլ իրմէն. իր գաղափարը աւելի ծիծաղ կը ներշնչէ ինծի. խեղճ կին... Ա՛հ, ճշմարտիւ, ամէն հաշիւ ընելով, կը նախընտրեմ իմ վիճակս Դոնէ, ինչ որ ալ ըլլայ, ոչ մէկը չպիտի ըսէ ինծի համար, խարազանող, սպաննող բառերը. ինչո՞ւ կ'ինը: Ո՞վ գիտէ սակայն... Թերեւս ինքը այս բոպէին իր մաքին խորէն կ'ըսէ.

— Ինչո՞ւ Արուսեակ, խեղճ աղջիկ...

* *

Արամը եկաւ. անհանգիստ և յոգնած երեւոյթ ունէր. չարժումները կտրուկ և ջղային բան մը ունէին. չատ մը անմիտ և անկապակից խօսքերէ ետքը, պարտէզին դրանը անաջքը ըսաւ.

— Օրիորդ Արուսեակ... Ինչպէս լաւ ծաղիկեր են ծառերը:

— Այո՛, կ'երեւայ թէ լաւ պտուղ պիտի ունենանք այս տարի:

Շփոթում իր կողմէ. յայտնի է որ խօսքին թելը կորսնցուց:

— Դուք կը սիրէ՞ք ճերմակ ծաղիկները, Օրիորդ Արուսեակ:

— Չափազանց:

Պա՛հ մը մնաց անշարժ ու ևս կը դիտէի իր թուխ դէմքը, ա՛հ, իրաւ, ինչ զգուելի բան է թուխ մորթը, երբեք կարծեմ թխագոյն մէկը չպիտի սիրեմ... Այս բաներուն կը խորհէի, բաղդատելով մանաւանդ իր կեղծ օձիքին ձիւնափայլ ճերմակութիւնը իր դէմքին հետ: Ու ձեռքերն ալ, երկայն ոսկրուտ ձեռքերը, մանիշակագոյն երանգներով, ինչպէ՛ս անտանելի կը թուէին ինծի. թխագոյն մարդիկը զիս կը զայրացնեն, չեմ գիտեր ինչո՞ւ. իմ ամբողջ էութեանս մէջ ըմբոստացում մը տեղի կ'ունենայ: Տարտամօրէն կ'օրօրուէի այս մտածումներով երբ անիկա գլուխը բարձրացուց. աչքերը չրջանակուած էին լայն սև ծիրով մը ու բոլորովին տոգոյն էր: Սակայն հակառակ իր ընկճուած երեւոյթին, աչքերուն խորը կը փայլէր նոյն պողպատի շողիւնը, նոյն դիմադրաւոր, դրեթէ բռնաբարող նայուածքը: Աչքերս դարձուցի ու երբ ձեռքը երկնացուց, մատներուս ծայրերը մինակ տուի սեղմելու, յանկարծակի բռնուած անձկազին և անհանգստող ներքին խռովքէ մը:

* *

Կէս օրին մօտ Արամ ինծի զրկեց ճերմակ ծաղիկներու դէպ մը: Թերեւս յոգնեցաւ զանոնք տեղաւորցնելու համար. ասիկա սովորականէն դուրս նուէր մըն է, յայտարարութիւն մը արդեօք. ի՞նչ պիտի խորհէր Վահէ եթէ գիտնար. կը կարծեմ թէ իր սովորական cynisme ու պիտի խնդար սուր ակումները ցուցնելով: Հորթանսիաներ ձիւնի ճերմակութեամբ կը տեղան, ճերմակ վարդերը իրենց թափանցիկ թերթերով կը դողդոջեն, ճերմակ մեխակներ սուր և դառն բուրմունք մը կ'արտաշնչեն:

ու ճերմակ լիւաներու անհամար բաժակները իրենց վտիտ ցողուններուն վրայ տատանելով ամէնէն հեշտագին և ամէնէն քաղցր անուշահոտութիւնով կը լեցնեն սենեակը . . . դեռ անհամար սպիտակ ծաղիկներ, որոնց անունները իսկ չեմ գիտեր, պղտիկ չնչին կոկոններ՝ որոնք բացուելու կը վարանին և ուրիշներ լայն թերթիկներով, այնքան փափուկ և անբիծ ճերմակութեամբ մը, որ ձեռքիդ մէջ կը թուովին, չտոկալով որ և է տաքութեան և հաղիւթէ իրենց անանուն և բայարձակ սպիտակութիւնը կը նշմարուի ձիւնաթոյր շահպրակներուն և մարդարտածաղիկներուն քով : Ի՞նչ ներդաշնակութիւն ճերմակութեան . . . Մասներովս կը շոյեմ ճերմակ քամակներու ողորուն թերթիկները ու չեմ կրնար թուել բոլոր տարաշխարհիկ ճերմակ ծաղիկները, շուշաններու, օրշիտէներու տարօրինակ գալարումները, ճերմակ աքասիաներու ողկոյզները ու նորածիլ օստերը սալսրենիներու, տանձենիներու, իրենց դիւրաբեկ և վազանցուկ ծաղիկներով բեռնաւորութեամբ, որոնք հաղիւթէ կը նշուին և կը թուովին, դառն նուշի տարտամ բուրմունք մը խնկելով . . .

Ա՛հ, ամբողջ ճերմակութեամբ լեցուած եմ կարծես և ձեռքերս կը մխրճեմ կաթնաթոյր ծաղիկներու դէզին մէջ ու ամբողջ սենեակս անօրինակ հանդիսաւորութիւն մը կ'առնէ, բոլորովին զարդարուած այս սպիտակ և հազուադիւտ ծաղիկներով :

Արամը անկարող կը դգայի այս տեսակ բանի մը : Ինչքան նեղութիւն կրած ըլլալու է, հայթայթելու համար բոլոր այս հազուադիւտ ճերմակ ծաղիկները և ի՞նչպէս սիրտս գթութեամբ կը լեցուի իրեն համար, երբ մանաւանդ կը խորհիմ բոլոր այն ծիծաղելի բաներուն, որոնցմով զինքը բեռնաւորեցի իմ մտածումիս մէջ, պարզապէս որովհետեւ իր թուխ մորթը անախորժ թուեցաւ ինծի : Բայց չէ՞ մի որ բոլոր այս ճերմակութիւնները նոյն իսկ խափշիկի մը սեւութիւնը մոռցնել պիտի տային . . . Ի՞նչ դիւրաբեկութիւն, Աստուածս, ո՛վ մաքէն կ'անցընէ թէ՛ ամէնէն զրահաւորուած կարծեցեալ կիներն ալ ճերմակ ծաղիկներով կը հրապուրուին և կը մոռնան շատ մը անախորժ բաներ . . .

Ճշմարտիւ յուսահատութեան մէջ եմ :

[Յաջորդով]

ԶԱՊԷԼ ԵՍՍՅԵՆ



ԵԹԷ ԳԻՏՆԱՅԻՒ...

Բ.

— Բայց խորհե՛՛ անգամ մը, տասներինը տարեկան ես... չատ մը բաներ տեսած ես արդէն... անմիա մէկը չեմ, ինքզինքդ անոր յարմար մէկը կը կարծես: Երիտասարդ, դաստիակակուած աղջիկ մըն է, փափկաճաշակ ու նրբիրան. ինչ որ կոչու է՝ իրեն զգուանք կը պատճառէ: Վերջապէս բացարձակ անկարելիութիւն մըն է քու և անոր մէջտեղ ըլլալիք միութիւնը, անկարելիութիւն մը զոր դուն իսկ պէտք է զգաս, դուն որ ապուշ մը չես:

— Ես այդ անկարելիութիւնը չեմ զգար, ըսաւ:

Եւ շարունակեց միեւնոյն չեշտով.

— Ես ալ ուրիշներուն պէս մարդ չեմ:

Ուսերս թրթուեցի և սկսայ խօսիլ: Երեսս կը նայէր իր մոխրագոյն աչքերովը, որոնց մէջ կրնայի կարդալ հաստատամտութիւնը և իմ պատճառարանութիւններուս տկար աղդեցութիւնը:

— Լիտիա Ալէքսիէւնան զի՛ս կը սիրէ, զի՛ս... ու հեռացայ իրմէ:

Տեղէն ելաւ դանդաղօրէն, կորաքամակ, շրթունքները պրկած և դուրս ելաւ, առանց ձեռքս սեղմելու: Աչքերով հետեւեցայ իրեն: Յաջորդ իրիկունը, Լիտիա Ալէքսիէւնան տունը դացի, և զգուշութիւնով, որպէս զի չատ խնդացնել չի տամ զինքը, և առանց ըսածիս լուրջ հանգամանք մը տալու, ըսի որ աւելի աղէկ կ'ընէր, եթէ քիչ մը քիչ ուշադրութիւն ընծայէր դռնապանին:

— Ինչո՞ւ, հարցուց զարմանքով: Այնքան զուարճալի է... անոր խօսակցութիւնը լսելը չատ կը հետաքրքրէ զիս: Իր պատմութիւնները երբեմն այնքան յուզիչ են, հակառակ իրենց կոշտութեանը: Այնքան աղէկ կը նկարագրէ խոնարհներուն կեանքը... Ինչո՞ւ համար չպիտի խօսակցիմ հետը:

Այն ատեն բացէ ի բաց յայտնեցի որ Բլաթօն սիրահարուած էր իրեն, և աւելցուցի որ մարդուս առաջին սէրը, ինչ որ ալ ըլլայ, իր կեանքը կը կաղմէ:

Արհամարհանքով դողդղաց, աչքերը պզտիկցան, այտերը շառագուռեցան, և սկսաւ սենեակին մէջ երթալ գալ ջղաձգօրէն:

— Ինչպէ՞ս կը համարձակի ան, պուաց: Ա՛ն... կասկարմիր, քրտինքոտ ձեռքերովը... կասկարմիր ականջներովը... Ինչպէ՞ս կ'ըլլայ որ չեմ նշմարած մինչև հիմա: Բայց դարձեալ կը խղճամ վրան... Այնքան աղտոտ, այնքան կոշտ... Կ'ըսէիր թէ դռնապանները ալ գրած է...

— Եւ նոյն իսկ, իմ կարծիքովս, բաւական աղէկ...

— Ա՛հ, ինչ ինքնատիպ մարդ: Եւ ըսել որ չէի նշմարած. իրաւ որ

չատ տարօրինակ է: Ի՞նչ կրնամ ընել հիմա, Ֆիլիբ Վասիլի, պէտք է անմիջապէս տունէն հանել, անանկ չէ՞:

— Երբե՛ք... գոնէ ո՛չ անմիջապէս, խրատեցի. քիչ մը ժամանակ վերջը ճամբայ կուտաք, զգուշութիւնով սակայն, ոչ շատ կանուխ... սպասեցէք:

— Պիտի ուզէի ամէն պարագայի մէջ տեսնել իր ոտանաւորները, ըսաւ մտախոհ:

Յետոյ դառնօրէն զղջացի Լիտիան այդ տեսակ խրատ մը տուած ըլլալու համար, առանց խորհելու որ տղայական անխոհեմութիւն մը ունէր անիկա: Հետեւեալ օրը քաղաքէն կը մեկնէի: Երկու երեք օր վերջը տունին մէջ ամէն մարդ գիտէր որ դռնապանը Օրիորդին սիրահարուած էր: Ինչպէս ետքէն իմացայ, իմ բացակայութեան միջոցին, ծիծաղաշարժ ու միեւնոյն ատեն ցաւալի տեսարաններ պարզուած էին:

— Բլաթօ՛ն, կը կանչէր Լիտիա:

Ան կուգար:

— Կը սիրես զիս, կը հարցնէր անոր, փաղաքական չեչտով մը:

— Այո՛, կ'ըսէր դռնապանը քաջաբար:

— Չափազանց շատ:

— Այո՛:

— Եթէ քեզմէ բան մը խնդրէի, կը շարունակէր Լիտիա անուշ և խորհրդաւոր ձայնով մը, երազուն նայուածքը յառելով անոր ցցուած անշնորհ դէմքին վրայ, պիտի ընէի՛ր, ի՞նչ որ ուզէի, Բլաթօ՛ն:

— Ի՞նչ որ ուզէիր:

— Է՛հ ուրեմն, եթէ այդպէս է — ժպտելով հիացումէն — եթէ այդպէս է, իմ սիրելի Բլաթօնա...

Իր արտայայտութիւնը կը փոխէր և խորունկ հառաչ մը արձակելով, կը վերջացնէր:

— Սամավարը պատրաստէ...

Իր աչքերուն մէջ չար ծիծաղ մը կը պարզուէր: Միւսը կը հեռանար գլուխը կախ, սամավարը կը պատրաստէր, երեսին ցցուած մասերը աւելի աչքառու կը դառնային և աչքերը աւելի կը խորունկնային ճակատին տակը: Երբեմն Լիտիա, Բլաթօնը հարցափորձելէ վերջը՝ անոր սիրոյ աստիճանին վրայ, կը հրամայէր որ երթար ցելսոտ կիսակոշիկները մաքրէր, կամ իր բարեկամուհիին տոմս մը տանելու կը զրկէր: Եւ ամէն վայրկեան, Լիտիա՝ երիտասարդին սէրը կը խառնէր այն ամէն բաներուն՝ զորս կը պահանջէր անիէ: Անոր սէրին անուշտովը կը խօսէր հետը շարունակ: Իրիկունը, երբ այցելուներ ունենար, Բլաթօնը կանչել կուտար, և զանիկա կը ստիպէր որ իրենց ոտանաւորներ կարգայ. և անիկա՝ գլխիկոր կը գործադրէր, առանց մէկու մը երեսը նայելու: Ինչպիսիք զայն կը փառաբանէին, խոնարհութիւն մը կ'ընէր, և դէմքը

այնքան կ'անշարժանար որ՝ դաճէ է պիտի ըսէին: Եւ անոր ներկայութեանը Լիտիա կ'ըսէր բարեկամութիւններուն:

—Գէշ չէ, հէ՞: Երբեմն ասոնցմէ աւելի գէշ ոտանաւորներ կը հրատարակուին: Անվարժ, բայց անկեղծ են... Գիտեմ որ բանաստեղծը սիրահարուած է... առանց յոյսի: Իրեն համար երջանկութեան ուղին փակուած է, դասակարգի նախապաշարումներովը և անտարբեր սիրտովը անոր՝ զոր կ'երգէ...

Ասիկա Բլաթօնի հետ անխոհեմաբար և անիրաւ անգթութեամբ վարուիլ էր. կարծես թէ երիտասարդին սէրը իր արժանապատուութիւնը կը վիրաւորէր և ասանկով կ'ուզէր վրէժը լուծել: Ասկէ զատ, միւսներն ալ աղէկ չէին վարուեր հետը: Օրինակի համար ծեր Բրօֆէսէօրը, շատ բարի մարդ մը, որ զխտունի մը պէս կը սիրէր բոլոր միջատները, հաճոյք կը զգար Բլաթօնը ծաղրելով:

—Բանաստեղծ, կ'ըսէր անոր, խոհարհաբար կը խնդրեմ ձեզմէ, որ այդքան աղբ չցանէք ծնեբեկներու ածուին վրայ, հազար անգամ խնդրած եմ և միշտ կը մոռնաք: Եթէ այդպէս շարունակուի, առանց ծնեբեկի պիտի մնամ... Մնաց որ, չեմ բարկանար, վիճակդ կը հասկնամ, հէ՛, հէ՛, օրէնք է ասիկա. տղայութեան միջոցին մարդ կարմրախոտէ և հարսանիթէ կը տառապի, երիտասարդութեանը՝ կը սիրահարուի և բանաստեղծութիւններ կը գրէ և շահատակութիւններ կ'երազէ...: Ասիկա կեանքի տեւողութեան մէջ ժամանակի կորուստ մըն է, որ ցաւալի է, բայց ասիկա շատ աւելի աղէկ է սակայն հասուն տարիքի գիտակցութենէն:

Բրօֆէսէօրը միշտ երկարօրէն կը խօսէր իր պերճախօսութիւնը ձանձրացուցիչ էր, սակայն ստիպուած մտիկ կ'ընէր միւսը: Սպասաւորներն ալ կը ծաղրէին Բլաթօնը, աւելի միամտութիւնով և կոշտութիւնով: Եւ բոլոր այս ծաղրաբանութիւնները իրենց նպատակին կը հասնէին ուղղակի, որովհետեւ թիրախը պէտք եղածին չափ մեծ էր: Բայց, ճշմարտութիւնը կը ստիպէ ըսել որ՝ ծաղրածութիւններուն մէջ ամէնէն հնարամիտը Լեաիան էր: Իրիկունը, լուսնի լոյսին տակ, Լիտիա բաց պատահանին առջեւ կը նստէր և շնորհալի, մտախոհ երեւոյթով մը բարեկամութիւններուն կ'ըսէր որ՝ սէրը արգելք չգիտեր: Իրեն համար կարեւորութիւն չունէր աղնուականը կամ գեղացին. մի միայն մարդը, սիրուած մարդը կը փնտռէր: Եւ Բլաթօն կը լսէր այս ամէնը: Յետոյ կը կանչէր զայն, անտարբեր նայուածք մը կը նետէր վրան, և վերջը կը հրամայէր որ՝ այն ինչ բանը ընէր իրեն համար: Մեղամաղձոտ կտորներ կը նուագէր, որոնք սիրահարին հոգին կը յուզէին փափկօրէն. քաղցրանուշ երգեր կ'երգէր որոնց մէջ սիրուածին մեղկութիւնը և գգուանքին սպառումը կը թրթռային և Լիտիա անանկ տեղ մը կը կենար որ՝ դռնապանը կարենար տեսնել և լսել այս ամէնը...

Օր մը Բլաթօն Լիտիաին մօտեցաւ պարտէղին մէջ և ըսաւ .

— Ինչո՞ւ ամէն վայրկեան զիս կը ծաղրէք... մի խնդա՛ք, պէտք չէ որ խնդաք... Ի՞նչ բան ծիծաղելի կը դանէք ձեզ սիրելուս մէջ : Շատ չանցած պիտի մեկնիմ այս քաղաքէն... : Կ'ուզեմ որ ձեզմէ անուշ յիշատակ մը հետս տանիմ... Աստուծոյ սիրուն, մի՛ չարչարէք զիս... :

Դէմքը մօխիրի դոյն առած և յօնքերուն մէջտեղ ահազին խորշոմ մը բացուած էր : Մեղմ ձայնով կը խօսէր և անշարժ կը կենար : Իր անձին մէջ բան մը վախցուց Լիտիան, որ փախաւ գնաց, առանց բառ մը արտասանելու : Յաջորդ օրը, աւելի՛ հաճոյք դգաց զանիկա տանջելով : Սալօն կանչել տուաւ և հրամայեց որ իր երկու բարեկամուհիներուն առջև ոտանաւորները կարգայ : Քերթուածը բռնադրօսել էր և երիտասարդ աղջիկները մտիկ ընելով կը խնդային :

Առտու մը հետեւեալ հեռագիրը ստացայ :

«Անմիջապէս եկո՛ւր : Բյարօնին դժբախտութիւն մը պատահեցաւ :

ԼԻՏԻԱ»

Լիտիա ինծի կը սպասէր, դարհուրած, աժդոյն, գրեթէ հիւանդ :

— Ռէվոլվերի հարուածով մը անձնասպան եղաւ :

— Կարելի բա՞ն է, պոռացի :

— Այո՛, այո՛, ըսաւ ջղագրգռօրէն պատելով սենեակին մէջ : Եւ դո՛ւն ես այս ամէնուն պատճառը, դո՛ւն :

— Ե՞ս :

— Անշուշտ, պէտք էր որ զայն անմիջապէս ճամբէինք... դուն ըսիր որ ատիկա աղէկ չէր ըլլար : Եւ հիմա՞... խեղճը :

Արցունքները կը մարգարտանային աչքերուն շուրջը. կը տեսնուէր որ բոլոր գիշերը անքուն անցուցած և շատ լացած էր :

— Եթէ գիտնայի որ այսքան... լուրջ սէր մըն էր, չպիտի համարձակէի կատակել հետը, ըսաւ թաշկինակը աչքերուն տանելով : Կ'ըսեն որ դեռ ողջ է... չուտ մը զանիկա տեսնելու գնա՛ : Ես չեմ կրնար... աւելի ուշ պիտի երթամ... հայրս ալ շատ յուզուեցաւ, ամէն մարդ կը գթայ կոր վրան... : Այնքան տարօրինակ մէկն էր :

Միամիտ : Նոյն իսկ այդ միջոցին, անոր վրայ կը խօսէր, կոտրած խաղալիքի մը վրայ ողբալու պէս :

Անմիջապէս հիւանդանոց դացի, և ճամբան տրամօրէն Բլաթօնի վրայ կը խօրհչէի : Այնքան հաստատամիտ և աննկուն կ'երեւար ան աչքիս և ահա բաղխում մը զինքը ջախջախեց, զինքը մեռցուց : Եւ չէի կրնար հասկնալ կրթուած մարդերու յատուկ իր շատ բնական ջղային տկարութիւնը :

Կունակի վրայ պառկած էր, դէմքը դեղնած, խորշոմալի, անարիւն. աչքերը խորունկցած խոշորցած էին. անձկութիւնը, կսկիծը սառած էին անոնց մէջ : Շրթունքները պրկուած էին և դէմքին ցցուած մասերը

աչքառու կերպով անկիւններ կը ձեւացնէին: Անկողինէն դուրս կը կախուէր ոսկրուտ երկար ձեռքը, որուն մասներուն ծայրերը տախտա-
կամած կը շօշափէին: Երկար ատեն աչքերուս մէջ նայեցաւ, թա-
փանցող նայուածքով մը: Վերջապէս, տիւանները սեղմ, ըսաւ սուր
ձայնով, գծուարութիւնով, տկարութենէն չնշառաւաւ.

— Հարցուցէ՛ք իրենց... անոնց համար ախտաւեցայ, իրենց կեանքը
հանգստաւէտ և մաքուր ընկելու համար... ինչո՞ւ համար այս վիճակին
մէջ ձգեցին զիս... հարցուցէ՛ք իրենց... ինչո՞ւ համար...:

Եւ աչքերը գոցուեցան: Զեռքը կամաց մը վերցուցի և ծռնկիս
վրայ դնելով գորովալիբ շեշտով մը ըսի.

— Ատ եղածին մէջ ո՞՞ր մը չկայ, բարեկամս...: Թիւրիմացութիւն
մըն էր... պէտք չէ այդքան խտորէն դատել անձերը: Պիտի բշկուիս
և խնդիրը ինքնիրեն պիտի լուսաբանուի. գիտես արդէն թէ ինչ շնորհ-
քով մարդիկ են...

Զեռքը մեղմօրէն ծռնկիս վրայէն քաշելով տախտակամածին վրայ
ձգեց:

Աչքերը միշտ գոց, ըսաւ.

— Սենեակիս մէջ... գիրքեր ունիմ... Ռոսթոֆ զրկեցէ՛ք զա-
նոնք... Էվսէի Սքրիպպին տաղձագործին... չմոռնա՛ք...

— Շատ աղէկ, պիտի զրկեմ:

Նօթատետրս գրպանէս հանելով տաղձագործին հասցէն գրեցի:
Բլաթօն անշարժ կը մնար միշտ: Կուրծքին մէջ բան մը ահռելի կերպով
կը հանդար, և ակնակողմները իրենց սեւ փոսերով, մեռելի մը կեր-
պարանքը կուտային դէմքին: Կը դիտէի զինքը առանց խօսելու, նս-
տելէս ձանձրացած և չհամարձակելով մեկնիլ: Վերջապէս աչքերը
բանալով մրմնջեց.

— Գացէ՛ք...

— Ցտեսութիւն, ըսի, ձեռքը սեղմելով:

Ո՛չ չարժու՞մով և ո՛չ ալ խօսքով պատասխանեց: Յամբօրէն, յուզ-
ուած, սենեակէն դուրս ելայ: Նրբանցքին մէջ լսեցի Բլաթօնի խռպոտ
ձայնը.

— Հիւանդապա՛հ... թող մի՛ տար որ մարդ ներս մտնէ, ո՛չ ոք,
խնդրեմ...

Կը խորհէր անշուշտ որ Լիաիա իրեն պիտի այցելէր:

Գիշերը մութաւ:

Սոստումս կատարելու համար գիրքերը Ռոսթոֆ զրկեցի: Իր բա-
նաստեղծութեան տետրակները այրած էր վառարանին մէջ՝ սպասաւոր-
ներուն ըսածին նայելով. բայց գիրքերուն մէջէն, թերթ մը թուղթ
գտայ, բոլորովին սեւցած, որուն վրայ հետեւեալ տողերը գրուած էին.

«Երկար տեսն եւ յաւաքայ, կեանքիս մէջ քաճարացայ դեպի, ինչի, դեպի պատ-
ռանդանդ, եւ դիտեցի շուրջս, առեւտրայ երկիրը ամբողջով ռահվիրայի անկուշտ
եւ ըզձապաւ աշխտով»:

Իբր յիշատակ՝ պահեցի այս թուղթը Բլաթօնէն: Վերջերս դարակս
խառնած միջոցիս, գտայ զայն. յիշեցի անմիջապէս երիտասարդը և
գիրի առի ինչ որ գիտէի իր վրայ...

Բարգմ. Ն. ԵԱԶԵԶԵԱՆ

Կ Ա Զ Ե Ր Ը

Շագանակագոյն կամ ձիւնասպիտակ,
Գողղըղալով մեղկ հովի հոսանքէն,
«Կազ»երը իրենց բախանցկութեան ճակ
Գէմքի պջրանքներ անգուլ կը ծածկեն:

Ընչ գայն որ բլլան, ո՛րքան ծփծփուն,
Օղի խուերէ հիստում են կարծես,
Ա՛յնքան ճարճում են, վերջապետում
Թեւերնին բացած քաշումներու պէս:

Ու մարմաւային փափկութիւններով
Միտ կը ծածանին, միտ կը վէտէին,
Բոյրի սարսուռներ կարեցրնելով
Կը խնկաւեսեն ամբողջ շուրջերնին:

Եւ ինծի այնպէս կուզայ հեռուէն
Թէ այդ «կազ»երը քոյլ ու ամպային
Կիներու գլխուն շուրջը ծփալէն
Կայն դրօշներ են որոնք կ'երկարին,

Ծեփծեփումներով քերել ու անփոք.
Գէմքերուն վրայ պարզում երկայն
Դրօշներ կազէ, նուրբ, այերանիւր,—
Խորհրդանշան իրենց զօրութեան:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Ծ Ե Ր ՈՒ Ն Ի Ն Ե Ր Ը

Ամէն առտու, միեւնոյն ժամուն, երբ չանցրեւեր և հովը շատ կծու
չէ, կ'երեւան անոնք իրենց տունին սեմին վրայ, զգուշութեամբ սան-
դուխներէն վար կ'իջնան և կը քայեն արեւին տակ քսուող պզտիկ քայ-
լերով: Այրը, ուժով մը գաւազանին կը կրթնի, որովհետեւ սրունքները
ալ շատ զօրաւոր չեն և հասակը ա՛լ աւելի կը կթի ըրած ճիգէն: Բայց,
երբեմն կը կենայ, կը չափուի, գաւազանը գետինը կը զարնէ անձնա-
վատահ ձեւով մը, և չորս կողմը կը նայի, գլուխը վեր բռնած երի-
տասարդի մը պէս: Իր լաւ խողանակուած գլխարկով, ազւոր վերար-
կուով և բուրգէ ձեռնոցներով միշտ հաճելի է տեսնել զինքը և երբեք
կինը աւելի հպարտ չէ զգացած, որչափ անոր թեւը մտած պտտած
ատեն, իր յաւիտենապէս նոր ու վայելուչ սև մետաքսեայ հագուստին
մէջ: Անոր վերարկուն կ'երկարի չիփ չիտակ, գլխարկը շիփ է երկու
մանիշակագոյն շղերովը և շնորհալի կ'երեւայ կինը երբ կը բանայ իր
ծաղիկներով գեղեցիկ հովանոցը, պաշտպանելու համար արեւէն իրեն

հետ ամուսինն ալ՝ որովհետեւ այրը երբեք չէ ուզած հովանոց գործածել, անգործ մարդու մը հովերը չառնելու համար: Իրենց դուռներուն առջեւը կեցած, խանութպանները գլխարկին կը հանեն անոնց անցնիլը տեսնելով, և անոնք ալ կը պատասխանեն գլխու բարեացակամ՝ և քիչ մըն ալ սրաչապանողական նշաններով: Օգին կամ եղանակին համեմատ, այս կամ այն կողմը կ'երթան անոնք: Ամառը, երբ արեւը զօրաւոր է, պարտէղին կողմը կ'երթան, կը նստին փայտէ նստարանի մը վրայ, մեծ կաղնիներուն շուքին տակ, և կը դուարձանան ժպտելով պզտիկ տղոց, որոնք կը ճանչնան և կը բարեւեն զանոնք. կամ, ուրիշ անգամներ, կը պտտին դեռին երկայնքն ի վար, ձկնորսներուն որսալը կը դիտեն, անոնց կը մօտենան և կը հարցնեն թէ՛ չատ ձուկ կ'այ: Բայց ձմեռը, երբ օդը ցուրտ է, կը տաքնան արեւէն, դէպի՝ կայարանը տանող մեծ ճամբուն վրայ և կը վերադառնան Շուկային Փողոցէն, խանութները դիտելով և ապրանքներու գիները առջի ատենուան գիններուն հետ բազմապատելով: Երբ տուն հասնին և հանեն գլխարկին ու վերարկունին, սեղան կը նստին, և ծերուկ խոհարարուհին՝ որուն հետ տղու մը պէս կը վարուին հակառակ անոր ճերմկած մազերուն, չատ պարզ, բայց խնամուած կերակուրներ կը բերէ: Ունեցած սկսաներովին կը դպին ուտելիքներուն, կը բազդատեն իրենց սիրած ու չսիրած կերակուրները, և իւրաքանչիւրը վարպետութիւնը ունի միւսին ձգելու ամէնէն ազւոր կտորները: Ախորժակ չունին ա'լ և իւրաքանչիւրը կ'ուտէ՝ բարի օրինակ ըլլալու համար ու կը խնդայ իր մեքենայութեան յաջողութեանը վրայ, երբ կը տեսնէ միւսին պատառ մըն ալ առնելը: Ծաշէն վերակենդանացած, փութկոտութեամբ աթոռին ետեւ կը հրեն, և միշտ իրարու թեւ կը մանեն սալօնը անցնելու համար: Հանգիստ աթոռներու մէջ կը տեղաւորուին. կինը դրիժն կ'առնէ ու այրը սիկառը և կամաց կամաց անոնց արտեւանունքները կը ծանրանան, գլուխները կը խոնարհին և կը քնանան անոնք, իրարու վրայ երազելով: Երբեմն, յանկարծ, ասեղներուն կամ սիկառիկին վար լցնալը կ'արթնցնէ զիրենք, և քիչ մը շփոթած, երկուքն ալ կը փախան ժպտելով. «Է՛հ, է՛հ, կարծեմ քնացայ»: Բայց, սովորաբար, նամակներու ցրուիլին զանգակի հարուածէն է որ կ'արթննան և անհամբերութենէ կը դողդղան, սպասելով նամակներուն, դուրս ծերուկ Մառին պիտի յանձնէ իրենց: «Որչա'փ ալ կ'ուշանայ աս աղջիկը. կը շատախօսէ՞ դեռ. կամ, ո՞վ գիտէ, չըլլա՞յ որ սիրաբանութեան մը բռնուած ըլլայ ցրուիլին հետ»:

Վերջապէս ներս կուգայ Մառին: Ձեռքերուն մէջ կը կրէ օրուան չգիտցուածները, խորհրդաւոր թուղթի կտորները, որոնք կը ճանչցնեն անոնց տիեզերքին գոյութիւնը — լրագիրը և նամակները: Սիրական նամակները: Բարեբախտաբար ամէն օր կը հասնին անոնք: Ձաւակներնին ցրուած են Գաղիոյ ամէն անկիւնները: Մինչև իսկ, մէկ հատը ծուկերը անցած է: Այս աղտոտ թուղթի կտորներն են որ կը պարունակեն

անոնց մտածումները և թուռիկներուն վրայ լուրեր: Շուտ շուտ, ծեր մտաները կը պատռեն պահարանը և կը բանան թուղթը, եւ մինչեւ որ տեսնան թէ ամէնքն ալ աղէկ են, մտատանջութիւն մը կը կծկէ երկու դէմքերը, թէպէտ իւրաքանչիւրը կը ջանայ խնդուն ըլլալ միւսին համար: Եւ երբ վստահ ըլլան թէ հիւանդ չկայ, չո՛նչ կ'առնեն, դէմքերնուն գիծերը կը պարզուին և նամակը կը կարգան կտոր կտոր, ամէն մէկ տողին կենալով, բաւ մը մեկնելու, նախադասութիւն մը կրկնելու համար, փափկութեամբ ծաղրելով դիրք, օրուան մեծ հաճոյքը տեսել տալու համար: «Այսօր լուրերը՝ բոլորովին աղէկ են: Ոչ միայն Հանրին, կինը և երկու զաւակները առողջ են, այլ կ'երեւայ թէ անոնց դիրքը պիտի բարւոքի: Հանրին քաջաբէր կը խորհի իր գործերուն շահակից ընել զայն: Ահա՛ դէպք մը»: Նամակը վերջանալուն երկար տուն խօսելու նիւթ կայ: «Սա քաջ Հանրին, ի՛նչ ալ բաղդ ունի: Աղէկ շահեցաւ երջանկութիւն, աշխատութեան և եռանդին ուժովը: Եթէ խեղճ էամօնը անոր կիսունչափ բախտաւոր եղած ըլլար, չպիտի սոխպուեր երկիրը թողուն»: Ծերերուն ճակատները կը մթաքնին, խորհելով հեռաւոր աշխարհներուն վրայ, Ուղիէանոսին անդիի կողմը: «Աւա՛ղ, որչա՛փ դժուար է Գաղիոյ մէջ հաց ճարելը: Հազիւ Աննան և ամուսինը երկու ծայրը իրար կը բերեն կոր. և ի՛նչ պիտի ընէ Լուիզը երբ աղէկ մըն ալ աւելնայ կերակրելու: Աստուծոյ շնորհիւ մինչեւ հոս գործին մէջէն դուրս ելան: Անշուշտ պիտի շարունակեն այսպէս»: Բայց հեռաւորութիւնները որքա՛ն մեծ են ու տեսութիւնները որքա՛ն հաղուաղէպ: Չորս տարի է որ Էտմօնը մեկնած է, երկու տարի է Աննան և Լուիզը տեսած չեն, և դիպուածով է որ, վեց ամիս կայ, Հանրին կրցած է քսանչորս ժամ տունը անցնել: Բայց ի՛նչ կ'ուզուի որ ըլլայ: Այս է կեանքը: Ծերուկները չեն տրտնջար. ի՛նչ պիտի հասկցած ըլլային, եթէ համբերել և գոհանալ չգիտնային:

ԱՆՏՐԷ ԼԵԽԹԷՆՊԷՐԿԷՐ

Թարգմ. ՄԱՆՆԻԿ ՊԷՐՊԷՐՅԱՆ*

[Յաջորդով]

*Օրիորդ Պէպլերեան՝ շնորհալի աղջիկը ողբացեալ գրագէտ-դաստիարակին՝ Ռեքեոս Պէպլերեանի, եւ րեքացաւորս Ալիսարի Ամերիկեան Աղջիկներու Վարժարանէն, հօր սուգէն առաջ դիպած էր մեզ իր քարգմանութիւնը, — նուրբ պատուամբ մը, — զոր այսօր միայն առիքը կ'ունենանք հրատարակելու, ճիւրբու առասուրբան հետեւանով: Օրիորդ Պէպլերեան՝ իր այս առաջին հրատարակութիւնով, **Մագիսի** միջոցով իր մուսքը կ'ընէ լրագրութեան մէջ, ուր իրմէ եւ իր ասիւնակից ընկերակիներէն կը սպասուի լայն գործակցութիւն մը, ինքնագի՛ր ալ հրատարակութիւններով, իբր խնամուած դաստիարակութեան մը եքթարկուած զարգացած անդամներէն Հայ իգական սեռին, որոնցմէ արդար ակնկալութիւններ ունին ընդհանուր կիս սեռի իրենց էայրերը:

Խմբ. Ծան.

ՊԱՏԱՍԽԱՆ

«ՄԱՍԻՍ»Ի շԱՐՑՈՒՄԻՆ

Անձնասպանութիւնը յաւիտենապէս խորհրդաւոր ու նոյնքան խորունկ արարքի մը բնոյթը պարզած է միշտ Այլազան ու հսկասական եղած են այս մասին արտայայտուած դատողութիւնները, մէջտեղ դրուած կարծիքները, համոզումները: Կրօնքը կը դատապարտէ այս արարքը, գիտութիւնը կը վերազդէ զայն վատմար մոլութիւններու, տարասերութիւն (dégénérescence), իսկ մարդկութիւնը, անհոգ ու սկեպտիկ հանդիսատես, կը ժպտի դառնագին և ուսերը կը ծոծուէ:

Եթէ կան սակայն իմաստասերներ, որոնք յանախապէս կը զբաղին անձնասպանութեան հաջգով, ո՛չ իբր Կեանքի լաւագոյն վերջաւորութիւնը վնասելու և՛ զաւանջու համար է զայն, ո՛չ ալ եզրակացնելու համար թէ անկա կրնայ կրօնքի եւ քնկերական միասնութեան առջեւ գերծ մնալ արդար ապավարկութենէ մը: Մնաց որ, ամէն անձնասպանութիւն մէկզմէկէ փոփոխ ու տարբեր պայմաններու մէջ և իրարու հակընդդէմ պատճառներով է որ կը կատարուի և այս պայմանները, այս պատճառները կը բաւեն մեղմացում մը տալու եղած արարքին: Ասանկով միտքի մարդիկը կը մղուին յուսահատ անձնասպանին հողերանութիւնը ընելու, biologique ստուգարանութիւններով տրամաբանական լուծուած մի մը կարենալ յանդելու նպատակով:

Մասիսի հարցումին մէջ կայ ճշդիւ խորհրդածուծեան նիւթ հայծայթող պարագայ մը, է՛ն կարեւորը թերեւ և որ է անձնասպանին մեծահաճութեան, քիզիքիական ու բարոյական մեծ ձիւքեմով օժտուած ըլլալը: Ուրեմն, երբ ասանկ եզական երիտասարդ մը վերջ կուտայ իր կեանքին, մի միայն անոր համար որ իր հայրը չէ ներած իրեն որ ամուսնանայ սիրած աղջկանը հետ, կրնա՞ր արդարանալի նկատուիլ ընկերային ու կրօնքի նկատումներով: Ես պիտի մղուէի պատասխանելու թէ այո՛ւ. — Այո՛, որովհետեւ եթէ պիտի հաւատանք որ «Սիրեցէր զմիմեանս» աւետարանական հիմին վրայ կանգնուած իտե՛լ ամուսնութիւնը լաւագոյն է բաղդատարար mariage de convenance կամ mariage de déclinacion կոչուած ամուսնութիւններուն,

եթէ պիտի ճանչնանք սա ճշմարտութիւնը թէ՛ հայր մը ամէն բանէ առաջ իր զաւկին երջանկութեանը նախանձախնդիր ու փափաքող մը պէտք է ըլլայ առաւելուպէս, ինչո՞ւ ուրեմն չխորհիլ և չըսել թէ՛ նոյն այդ մարդը, իբր հայր, իր մերժումով չարաչար զործածած կ'ըլլայ իր տղուն կամքին և նպատակին վրայ ճնշելու իրաւասութիւնը, ի՞նչպէս կ'ըլլայ որ հայր մը ուզէ խորտակել զաւկին ապառնի անդորրութեան հաւանականութիւնը, չըսելու համար երազը: Տարբեր խնդիր մըն է եթէ սիրուած աղջիկը զատապարտելի արատ մը ունենայ իր կուսական ճակտին վրայ, եթէ զո՞նք ըլլայ ընտանեկան զարշ բարբերու. արգասաւորութեան մը: Սակայն որչափ ատեն որ այս տեսակ խոչընդոտ մը չկայ և եղածը պարզապէս երկու երազկոտ և ազնիւ հողիներու մաքուր շողկապումն է, հայր մը, բարեխիտ և անկեղծ հայր մը, աւելի հաւանական կը գտնեմ որ ջանք ընէ համակերպելու, զոհողութիւն մը ընելու կամ վերջնապէս ճարպիկ շարժումով մը միջոցը գտնելու որ իր զաւակը հրաժարի իր միտքը ու սիրտը տան չող մղձաւանջէն: Եթէ չընէ բոլոր ատենը, եթէ ինքն ալ չկուռի պահ մը գտնէ իր հայրական զգացումներուն և միւս կողմէ իր անդրդուելի մերժումէն առաջ զայիք մտահոգութիւններուն միջև եղած պայքարին ղէմ, կամ ան է որ կատարեալ parvenu մը, égoïste մըն է այդ հայրը, հսկառակ իր հաւատութեան և համբաւին և կ'ուզէ իր տղուն համար ընտրել իրմէն բարձր և տիտղոսաւոր լիջավայրի պատկանող աղջիկ մը, զրամի կամ ուրիշ որ և է արքանարհելի նկատումէ մը ծնունդ առած փառամոլութեան մը հետեւանքով, և կամ ան է որ, նուազ արդարագատ ոգւով մը կ'ուզէ պատրուակ մը նկատել զաւկին հաստատամտութիւնը, յամուսնութիւնը, զայն օրինաւոր ժառանգէ մը զրկած ըլլալու յոգի՝ և մասամբ ծիծաղելի որոշումին չըրժելու փափաքով:

Ասանկ անկնճիռ և տղեղ պարագայի մը ատեն, քիչեր կան որ զիմած ըլլան անձնասպանութեան, Ոմանք կ'ամուսնանան coûte que coûte իրենց սիրած աղջկան հետ, ամէն զրկանք աչք առնելով, ամէն տառապանքի ղէմ դնելու որոշումով: Ոմանք կը համակերպին, զլուի կը ծռեն հայրական մերժումին

առջև, սպասելով աւելի յուսատու առիթի մը, սիրելով միշտ բաղձացուած էակը, խալ տնայնաւ տեղի կուտան շուտով, ազնիւը կը լքեն երեսի վրայ, բան մը չեղածի պէս, իրենց ժառանգէն չգրկուելու անդիմադրելի երկիւղէն, ես հոգիի և զգացումի մեծ տրտալայ. տուծին մը չեմ տեսնար ասանկներուն քով: Հասարակ մարդու, նկարագիրէ զուրկ մարդու գործ է խոյս տալ երանութենէ մը, որուն համար այնքան ատեն հարկ եղեր է մարտնչել, տառապիլ և անշքանալ: Որովհետեւ անձնասպան երիտասարդը *Amé d'élite* մըն է, հասարակ մարդու զգացումներ չունի, բանի որ անիկա սպրեւ, մեծցեր է ճոխութեան, պերճանքի մէջ և իր գաղափարները կեանքի ըմբռնումին մէջ բարձր թռիչներ ունին, իտէ. ալի և երազային հորիզոններու տակ զեզբւող, կը խորհի և կը զգա՞ թէ սայմաքումը, համակերպութիւնը ամենալի օրհասը պիտի ըլլայ իր այնքան չքնաղ ու բարոյալից կեանքին: Իր հոգին պարուրող և իր սիրտը վիրաւորող ճշմարիտ ու բարձր այն զգացումը՝ զոր Սէր կ'անուանեն մարդիկ, մահը կը ցուցնէ իրեն իբր փրկութիւն, երջանիկ վախճանի մը չարժանացող էակին և մ'ը յուսահոտը կը փսրի այդ փրկութեան: Բէ՛օհ, ի՞նչ պիտի կորսնցնէ վերջապէս, կեանք մը, զոր առանց սիրեցեալին կրելու կարող չէ արդէն ուսերուն վրայ: Եւ որոշումը կը պայծառանայ, նպատակը կը լուսաւորուի. հոգին վերջին անգամ մըն ալ կը դառնանայ, կ'ըմբռնու. նայ և զիշեր մըն ալ առանձնութեան և անձնալքումի մը պահուն, պո՛ւմ, հրազէնը խեղճ երիտասարդին զանիւր կը մխէ իր կիզանուտ և թունալից գամը, խորտակելով այսպէս հոն եռուզեռող անհամար ախուր և սեւ մոռածումներու մթերքը:

Սիրահար երիտասարդին այս ըրածին մէջ ասպետական *geste* մը կայ, որ կ'ապացուցանէ թէ միայն բեմին վրայ կամ գիրքերու մէջ չէ որ կը մեռնին սիրոյ համար: Այս *geste*ին մէջ կայ նաեւ *un brin de philosophie*, եթէ կ'ուզէք: Մտածել որ այս երիտասարդը մեծահարուստ անձի մը գաւախ է, որ օժտուած է բարոյական ու ֆիզիքական մեծ ձիրքերով և որ կը սպաննէ ինքզինքը միմիայն իր սիրած մէկ աղջիկը կնութեան առնելու մոտադրութենէն հօրը կողմէ արգելուած

ըլլալուն համար, չէ՛, պէտք է խոստովանիլ թէ *banal* անձնասպանութիւն մը չէ աս: Կարելի չէ՞ ընդհակառակը ըսել թէ այս պարմանին կեանքի մէջ շատերո՞ւ ունեցած կամ անուցած սովորական ըմբռնումէն աւելի բարձր ու գերընտիր հասկացողութեան մը սերմերը մշակեր է իր ներսիդին: Վիպական հոգի, որ կը ծիծաղի զբամով ձեռք բերուած երջանկութեան վրայ, որ չզիտեր զձուձ ու սին պերճանքներու փառքը և որ զոհողութիւնը կը նկատէ ճշմարիտ ու մարդու կեանքին ամբողջ բարոյական հիմք արդէն, է՛ն ետքը սիրոյ տաճարին առջև անշնչացնելու համար ինքզինքը, հեշտանքի բաժակէն չիմած տակաւին: Ասանկով, անձնասպանը արհամարհած կ'ըլլայ իր սիրտին խորքէն՝ հօրը մեծափառամութիւնը, իր ժառանգութեան զեղեցիկ ակնկալութիւնները ամբողջ՝ իր անունին պարծանքը, Բոլոր ատենք քամոհրանքի ուժգին հարուածի մը կ'ենթարկէ և այս արհամարհանքը, այս նողկանքը կեանքի պատրանքներուն հանդէպ՝ պիտի բաւէ իր նկարագրին մեծութիւնը ապացուցանելու, իր կորովին արժէքը պարզելու, «մահուան պէս հզօր» տենչէ մը, բանդագու. շանքէ մը բռնկած:

Սկեպտիկներ կան, ընդհանրաբար *je m'en fichiste* անիմաստ դարձի աշակերտներ, որոնք պիտի ծիծաղէին բաներորդ դարու սեմին վրայ աղջկան մը համար կեանքի բոլոր վայելքները զոհելու տրամադիր այս տարօրինակ *Werther*ներուն, *Ro. méo*ներուն վրայ: Թերեւս իրենց այս հեգնանքը իր արդարացի կողմերը ունենայ: Գոնէ ես կը զգամ թէ ինչպէս մինչեւ հիմա տակաւին ասկէ վերջն ալ հոգեբան իմաստասէրները և ծատերադիրները չպիտի դադրին ինքնասպանները նկատելէ և ներկայացնելէ իբր կեանքի անցահանդէսին է՛ն շահեկան և հետաքրքրական զէմքերը, իրենց խորհրդաւորութեանը և իրենց անձախանցելի զանազանութեանը մէջ:

ՏՕՄԻՆՈ

ՄԵՐ ԳՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

«Դիրքերը եղած են իմ համաշխարհային» ՍՄԷՆՍԸՐ

Քառորդ դարէ աւելի է որ մեր դպրոցները դադրած են Սաղմոս ու Նարեկ տալէ աշակերտներուն ձեռքը՝ իբր ընթերցանութեան դասադիրք: Անոնց յաջորդած են հետզհետէ նախ գրաբարսխառն, յետոյ ներկայ աշխարհաբար դասադիրքերը, տոհմիկ թէ օտար հեղինակներէ: Հայ լեզուն մեր վարժարաններուն մէջ կը նկատուի դասական դեան գլխաւոր աւարկայ՝ երկու որոշ նկատումներով:— իբր մայրենի լեզու և իբր կրթիչ ազդեցութիւն: Արդ, խնդիր է թէ ներկայ դասադիրքերը ո՞ր աստիճան կը նպաստեն այդ երկուքին ալ իրագործումին և ի՞նչ չափով: Գտնելի է այն նախաձեռնողութիւնը, որով տարուէ տարի հրապարակ կ'ելլեն զուտ աշխարհաբար դասադիրքեր, որոնց մով խղճամիտ ուսուցիչ մը կրնայ իր սաներուն սորվեցնել մաքուր հայերէն խօսիլ ու գրել. այս ձգտումը քաջալերական է թէեւ, բայց զժախտաբար անոնց բարոյական ներգործութիւնը հեռու է գոհացուցիչ ըլլալէ: Կը տեսնենք նախակրթարանի ընթացաւարտներ, որոնք դպրոցէն մեկնելէն ետքը՝ մատնուած կը մնան մտային անորոշութեան մը, անխորոշ ըլլալով հաշտեցնել արուեստական կերպով ստացուած բարոյական ճշմարտութիւնները իրական կեանքի պահանջներուն հետ: Եւ ասիկա այն պատճառով որ՝ դասադիրքերու մեքենական ընթերցումը ո՞ր և է բարոյական ազդեցութիւն թողուցած չէ անոնց վրայ: Ահա՛ ի՛րապէս տխուր երեւոյթ մը, որ արժանի է լուրջ ուշադրութեան: Կարելի չէ՞ արդեօք դպրոցին մէջ իսկ տալ այն տեսակ կրթութիւն մը՝ որով պատանին դպրոցէն կեանքի մէջ անցնելու շրջանին կարենայ դիրք մը գրաւել կամ հետապնդել կեանքի որոշ զաղափարական մը: Այս տեսակէտով ներկայ դասադիրքերը գլխաւորաբար կը մնան իբր լեզուին ձեւական մասը մշակելու գործիքներ, մինչդեռ **սգի՛ն, ուղղութիւնը** պէտք են գրաւել առաջին տեղը: Ո՞վ պիտի լեցնէ այս թերին, եթէ ոչ իր պաշտօնին գիտակից ուսուցիչը, ընտրելով ու ծանօթացնելով իր սաներուն, ժամանակակից կեանքի զաղափարները պատ-

պատկերացնող կարեւոր գիրքերը: Քանի որ պատանեկան շրջանի մէջ երեւակայութիւնը ամէնէն վաղ վիճակը կը ներկայացնէ, հետեւաբար ուսուցիչը շարաթը երկու կամ աւելի ժամեր բարձրաձայն ընթերցումի յատկացնելով, շատ դիւրութեամբ կրնայ տալուորէլ անոնց հոգիին մէջ կեանքի այն խոհանքերը, զորս արժնցնել կ'ուզէ: Այս գործնական վարժութենէն պատանին երբ համոզուով կը գրաւուին, որովհետեւ այս միջոցով նոր թռիչ մը կը ստանայ իրենց երեւակայութիւնը, տեսքովը իրական կամ իտէալ պատկերներու, որոնք սահմանուած են իբր փարոս առաջնորդելու իրենց ջայլերը՝ կեանքի մէջ: Արդէն հոգեբանութիւնը կը հաստատէ թէ, պատանեկան այս շրջանի ազդեցութիւնները անջնջելի կերպով կը տալուորէին մանուկ հոգիին մէջ և կը կերպարանաւորեն անոր կեանքը:

Կրթիչ ընթերցանութիւնը յաջող կերպով կիրարկելու համար երկու կարեւոր պայմաններ պէտք է նկատի առնել: Առաջին, աշակերտներուն պէտք է այն տեսակ գիրքերէ ընթերցում կատարել՝ որոնք իրենց մօտը գտնուող կեանքէն-դրուագներ-ներկայացնեն, քանի որ իրենց նախասիրութիւնը դէպի անոնց կը ձգտի: Յաջողութեան երկրորդ պայմանը ուսուցիչը ինքն է, իր հեղինակաւոր ձայնը, ուղղու շեշտը, բնական շարժումները, ամէնէն աւելի իր ներշնչումներն են նաև որ կրնան յուզել ու մագնիսացնել իր դեռահաս բարեկամները: Այս տեսակ ընթերցանութեան մը ազդեցութիւնը կարծուածէն շատ աւելի ուժգին է միշտ: Այս ազդեցութեամբ է որ երբ աշակերտը մէկ կողմէ մայրենի լեզուին կանոնները և շարադրութիւնը կը սորվի, միւս կողմէ կը ծանօթանայ նոր գիրքերու և կեանքի առողջ զաղափարներու, և երբ մեկնի դպրոցէն, գործնական կերպով ընթերցանութեան ճաշակը առած ըլլալով, իր ապրուստը ճարելու հարկին տակ իսկ միջոց կը գտնէ ինքնազարգացման միջոց կարգալով, ներշնչուելով մեծ խորհողներէ, տնով կեանքի ամէնէն դառն պայքարներուն մէջ իսկ արիւնջութեամբ կը ճակատի նիւթական խռչնողոտներու դէմ, մխիթարութիւնը գտնելով մոտաւորական բարձրագոյն կեանքի ոլորտներուն մէջ, փոխանակ անկումի փութալու: Կրթիչ ընթերցանութիւնը կամ

օգտակար գրքերէ ընթերցումը այնքան զօրաւոր դեր մը կատարելու սահմանուած է դաստիարակութեան տեսակէտով որ, տասնըիններորդ դարու մեծ փիլիսոփան՝ Սթենսըր մտուած է ըսելու. «Իմ համալսարանս գիրքերը եղած են»։ Ուրեմն քանի որ ապագայ մարդկութեան ճակատագիրը ուսուցիչին ձեռքն է, հետեւաբար անոր վրայ մեծ պարտականութիւն մը կը ծանրանայ, ուշադիր ըլլալ կրթիչ ընթերցանութեան։ Այն ուսուցիչը որ կը թերանայ իր այս նուիրական պարտականութեան, միմիայն դատագիրքին կապուելով, մ'ն պատմասխանատու կը մնայ ուսանողութեան առջեւ։

ՄԱՄԱՐԻՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

«ԱՒԵՏԱՐԵՐ» ԵՒ ՄՐ. 4. ԱՂԷՆ

Աւետարեւ իր վերջին քիւնով կը ներկայանայ հասարակութեան նշանակելի փոփոխութիւններով, որոնք իրենց վրայ կը հրաշխեմ մեր եւ հանրութեան ուշադրութիւնը։ Տօք. Պարմըլ, Նախկին Տնօրէն-Խմբագիրը բազմամեայ պարբերականին, որ զայն վարած է քսանորդ դարի չափ շրջանի մը մէջ, ինքնաբերաբար կը հրաւարի իր պաշտօնէն, իր ծերունազարդ տարիքին մէջ իւր մըն ալ հանգչելու՝ դիտարարութիւնով, **Աւետարեւ** ի հրատարակութիւնը շանձանքով աւելի երիտասարդ ու կոտորի ուժի մը՝ Մր. Ալեքի, որ այդ դերին համար կարողագոյն ղեկմէ ե։ Մր. Ալեքն իւր հայագէտ է եւ մասնաւոր ուսումնասիրութիւններ կատարած ըլլալով Հայ լեզուի վրայ, եւ երկար տեւել ապրած Հայերու մէջ, կարող է Հայի մը չափ միշտ ու հետօրէն խօսիչ ու գրեց հայերէնը, եւ միակ Ամերիկացիին է, որ լզգացներ իր ամերիկացիութիւնը, իր ուժով հայագիտութիւնով։ Մր. Ալեքն խմբագրական այդ պաշտօնին համար տիպար ընտրելին է նաեւ իր ձեռնհասութիւնով ու ողջամիտ գաղափարներով, գրական ըմբռնումներու եւ դաւանական հայեացքներու մասին։ Իր կարողութեան

այդ նշանները ան կը զգացնէ **Աւետարեւ** ի նոր խմբագրութիւնով հրատարակուած առաջին քիւնէ, ուր խմբագրական ծրագիրի մտարարութիւններով ու պէսպիսութիւններով իր ջանքերը յաջող իրականացում մը կը գտնեն եւ լաւագոյն կեանք մը կը խոստանան Հայ Բողոքական Հասարակութեան այդ հրատարակութեան։ Մր. Ալեքն շատ շայնքաւոր ու ողջամիտ հայեացքներ ունի հասարակական եւ դաւանական մարմիններու մասին եւ իր աշխատի հոմալիւրդի այդ շայնքաւորութիւնը անվերապահ խիստախօսութիւնով կը հռչակէ՝ իր քերքին առաջին քիւնէն իսկ, դարաւոր բանաձեւ մը եւ դաւանանք մը յեղաշրջելով եւ զայն իր մշտնադիմում ուղղութեան մէջ դնելով, «Հայ Լուսաւորչական Ժողովուրդ»-ը փոխելով «Հայ Ժողովուրդ»-ի։ Կը շնորհաւորեն, հիանալով իր այս շայնքաւոր ու գեղեցիկ շարժումին համար, որ մեծապէս խոստանալից է ըմբռնումներուն համար այն Ամերիկացիին, որ իր Հայագիտութիւնը կ'աւելցնէ մշտնադիմում Հայութեան պատշաճ դիրքով մը, քի՛ իրեն եւ քի մեզի։ Իր ջրագրական խոստանալից գործունէութեան ու դերին համար մեր խնդրական շնորհաւորութիւնները կը յայտնենք յարգելի Տնօրէն-Խմբագիրին **Աւետարեւ** ի, եւ մեր մեծաւերջի բարեկամին, նոր յաջողութիւններու մաղթանքով։

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԵՐԵՐ. — Ուսացանք Յովհաննէս Լուսինեան Գրաւորի կողմէ հրատարակուած **Գնքերցարանը**, Ա. Տարի, ձեռնարկութիւն Լեւոն Շաքրեանի։ Գարգնիւրու մէջ քննարկութեան ծառայելու կոչում լաւագոյն մերոսով պատշաճուած պատկերագրող դասագիրք մը, խմբագրութեան ուղղութեան ամեն մասերուն մէջ։ — Դաւանական Գործակալութեան կողմէ հրատարակուած **Փնջակը**, գիրք քննարկութեան եւ... ի քերականութեան. [Ի բերում ուսման? Գործակալութեան մասին]։

Հիմնագիր. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ։ Արտատպ. ՏՕԳԹ. Ե. ՄԱՍԻՍ։ Տպագր. ՍԱԿԱԵԱՆ

թեամբ երկսեռ խուռն բաղմութեան մը: Ճառեր կարգացին, երգեր երգեցին եւ նուագածութիւններ ըրին, Պրն. Պրն. Վ. Հիսարկեան, Ժ. Սէմէրճեան, Ա. Տատուրեան, Էքմէքճեան, Զուլումեան, Ն. Սլեքսանեան, Ժ. Շամտանճեան, Վ. Տարպասեան, Ս. Գուրպեան, Ա. Ֆնտլեան, Բ. Զէնէեան, Ա. Կիրճեան, Բ. Սալաեան: Վարժարանը կուտայ այս տարի հինգ ընթացաւարտներ՝ Պրն. Պրն. Պետրոս Ասապալեան, Յովհաննէս Բրուտեան, Վահրամ Դարպասեան, Պողոս Զէնէեան եւ Ահարոն Տատուրեան: X Այս տարուան Սահակ-Մեսրոպեան դրական մրցանակաբաշխութեան ենթարկուած գործերուն մէջ յիշատակելի են՝ Արշակ Սլաօյանճեանի գրածը, որ պատմութիւնն է Բուսնիի մէջ առաջին Հայ թեմերուն ու թեմականներուն հաստատումէն մինչեւ այսօրուան անոնց առաջնորդական, եկեղեցական ու դպրոցական վիճակին: Տիգրան Զիթճեանի տեղագրական աշխատութիւնը, որուն նմուշն է մաս մաս Բիզանդիոնի մէջ հրատարակուած «Արեւելեան ինքնագրաւարձը, պատկերացնող դաւառացիներուն խաղերը եւ ժողովրդական դրօսանքները. Հայ թատրոնի վրայ Սարգիս Թիւթիւնճեանի աշխատութիւնը, թատրոնի առաջին Հայ գործիչներէն մինչեւ այսօրուան անոնց կեանքը եւ գործունէութիւնը. Եւ Վիեննական Միաբանութեան անդամ Հ. Գովրիկեանի մէկ աշխատութիւնը՝ Զմիւռնիոյ Հայերուն վրայ:

Մինաս Ծալեանի «Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան» ուսումնասիրութեան շարքին մէջ.

Էջ	Տող	Կարգաչ
514	25	զօլաթուլը
515	16	Առատուկը
»	20	աւելի
516	32	կրթական
»	յուսանցի	Պաղարցի
536	7	կաւանդէն
»	28	գործ. Արքայի
»	29	պարառ. Արքայի
537	35	չրթնալ չղթայաչար
538	5	զոզորմելոյն
»	12	(Չ) (Է)
540	10	Պաղարցի
564	28	հրահրուած
565	24	փիլիսոփայականք
565	25	ատուածաբանականք
565	27	Ամրտուլու
565	36	դրած
594	4	Ապարանիկ
594	11	բացառութիւն
594	21	Վժանցի
595	34	Լիտացի
596	5	Գալունոս
596	29	Եւ.

«ՄԱՍԻՍԻ Հարցումներուն արդիւնքն հարկադրուեցանք՝ յետագել յաջորդ շարքուան:

ՊԱԼԻՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

Դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱԼԻՔԱՆ Ընկերությունը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., և. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմիջեւ զինելով և պայմաններով օժտուած է. կը կատարէ իսպան ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
այսքիւ, Տեօյէ Սքիկոյ Պաւքի կից, Արևասոյն Խան. (2)

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակռայի ցաւով՝ զայն քաշել կռուայ ճարտար առամնարոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կռուայ ակռան, կամ զուռօնի մէջ առնել կռուայ, ա՛լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լա՛ւ, ճարտար ու արուեստին դաղտնիքներուն զիտակ առամնարոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և գոհ մնալու մեծ ապահովութեամբ պէտք է դիմել հանրածանօթ առամնարոյժ Խաչիկ Էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պահէ-Գաբու:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տեսակ ակռայի և լինտի հիւանդութիւնները, փոսած ակռաները կը լեցնէ՝ առողջ ակռաներու պէս երկար առեն գործածուելու պայմանով:

ԲՈՒՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ակռաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ Բարմաք-Գաբու, Թիւ 8, Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգ-շարթի օրերը: Բերաի Աղքատախնամ դարմանատան մէջ:

Կիրակի օրերը ժամայորութեամբ կ'ընդունի:




Կը գտնուի բոլոր
գեղադործներուն քով:

Թուրքիոյ ներկայա-
ցւոյիչ Ո. Սօլաքեանց.
և. Պոլիս:

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնադիտարար և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին և նոր դաղիական ակտերը: Այս վերջին ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշարթի օրերը միայն ձրի: (8-10)



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Բնկերութեան վաճառատուններուն մէջ՝

ԿՊՇԱՐԹԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԿԱՆԱԹԱ

ԲԵՐԱ

ՊԱՆԱՏ

ՍԵՐԻՏԱՆ

1. Մեծ փողոց, Պօս Մառէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ,
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.

Զարչը Պօլու, Թ. 120.

Դասերը եւ նորագոյնիւնները ձրի.

կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Բնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՄԱՍՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐՈՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւաններու համար ստորեկան, 6) զրէ
Արտասահմանի » » 1) ֆրանք:
Թղթատարութեան ծախքը մեր վրայ:
Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները,
միշտ ձրիաբար, Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:
Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:
Զերատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:
Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

«ՄԱՍՍԻՍ» Ի Հասցէին

Գուրոնլու խան, քիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

در علمه غلطه قورسوتلی خاندان نومرو ۷ «ماسيس» غزتمسى اداره خانه سى

Rédaction de la Revue «MASSIS»

Nº. 7, Courchounlou Han, Galata.
CONSTANTINOPLE

ՌՕՊԷՐԹ ԳՕԼԷՃ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
կը սկսի Սեպտ. 5/18ին: Կարգադրութիւններ եղած են վաճառականա-
կան ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար: Վար-
ժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնա-
մարզներուն և խաղերուն, ինչպէս նաև վարժարանիս ընդհանուր առող-
ջական վիճակին վրայ կը հսկէ: Վարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք
մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն
տեսակ գործիքներ, վերջին գրութեանց համաձայն:

ԲԱՅՍՈՒԿԻ ԱՌԻԹ ՄԸ ԳՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԱՐԵՍԸ ԳՐԱՏՈՒ-
ՆԷՆ. ԱԻԱՅՆ 20 ԳՐՈՒՇ ՓՈԽՍՆ 60 ԳՐՈՒՇԻ: — 1. Ասորա. վէպ. Բ.
Սիւլա. Թրգ. Թէրզեան 10: 2. Ատրիեն. վիպերգ. Բանդամարեան 10:
3. Առողջապահութիւն. Տրթ. Փէշտիմալճեան 2½: 4. «Երեւնականութիւն»
Տ. Սէթեան 5: 5. Դիւրուսոյց Մերոս Անդր. Բերականութեան. Ասա-
տուրեան 15: 6-7. Ամուսնական ինչիւրներ. 2 հատոր 2½: 8. Սփռ-
թանք Ռամկին. Մ. Յովհաննէսեան 5: 9. Ուղեցոյց. Դրագիտութեան
Թուրքերէն Լեզուի. Դաւալճեան 5: 10. Պիւսալոցցի. Լինհարտ Կեր-
արուդ 5: Այս 10 կտոր վիպական, առողջապահական, գրական, լեզ-
ուարանական, բանաստեղծական և մանկավարժական գրքերը՝ օրոնք 60
զրուշ արժէք ունին, 20 զրուշի կը ծախուին Զարդարեան Եղբայրներուն
Դրատունէն՝ Բերա, Դալէ-Դարու. թիւ 695: Դաւառներու համար 7
զրուշ աւելի: Դրասէրներ պէտք է փութան օգտուիլ այս առիթէն, զի-
մեկով վերելի հասցէին, ուր կը ծախուին նաև ամէն տեսակ թուրքե-
րէն, հայերէն և ֆրանսերէն նոր թէ գործածուած գիրքեր, աժան և
զիւրամատչելի գիրքերով: